## ՀԵՏԱՔՐՔԻՐ Է ԻՄԱՆԱԼ

*Հայկական լեռնաշխարհում, Վանա լճի մերձակա Նեմրութ և Թոնդրակ հրաբուխները համարվում են գործող: Նեմրութ լեռան ընդարձակ խառնարանի լճերից մեկի ջուրը պաք է և ձմռանը չի սառչում, իսկ Թոնդրակ լեռան լանջերին առկա են բարձր ջերմաստիճանով (մինչև 720C) հեյզերներ:*

*Խաղաղ օվկիանոսի շուրջը գտնվում են բազմաթիվ  հրաբուխներ, դրանք կարծես կազմել են մի հրե օղակ Երկրի վրա: Հրաբուխներից 328–ը ցամաքի վրա են, իսկ 212–ը՝ Խաղաղ օվկիանոսի և դրան մերձակա ծովերի հատակին: Այստեղ գրանցվել են Երկրի վրա տեղի ունեցող ամենաուժեղ երկրաշարժերը:*